Երկրորդ ընթերցում

Նախագիծ

**Պ-574-01.08.2014-ՏՏ-010/2**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-185 օրենքի (այսուհետ՝ օրենք) 9-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Ավագանին յուրաքանչյուր տեղական տուրքի համար սահմանում է համայնքի տարածքում մեկ միասնական դրույքաչափ կամ սահմանում է տարբերակված դրույքաչափեր՝ հիմք ընդունելով համայնքի տարածքի՝ յուրաքանչյուր տեղական տուրքի համար իր կողմից հաստատված գոտիավորումը»:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ավագանին յուրաքանչյուր տեղական վճարի համար սահմանում է համայնքի տարածքում մեկ միասնական դրույքաչափ կամ սահմանում է տարբերակված դրույքաչափեր՝ հիմք ընդունելով համայնքի տարածքի՝ յուրաքանչյուր տեղական վճարի համար իր կողմից հաստատված գոտիավորումը»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

| **Առաջարկության հեղինակը** | **Հոդված** | **Առաջարկությունը** | **Եզրակացություն** |
|---|---|---|---|
| ՀՀ Կառավարություն | նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ | «Ավագանին յուրաքանչյուր տեղական տուրքի համար սահմանում է համայնքի տարածքում մեկ միասնական դրույքաչափ կամ սահմանում է տարբերակված դրույքաչափեր՝ հիմք ընդունելով համայնքի տարածքի՝ յուրաքանչյուր տեղական տուրքի համար իր կողմից հաստատված գոտիավորումը»: | Ընդունվել է |
| ՀՀ Կառավարություն | նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ | «Ավագանին յուրաքանչյուր տեղական վճարի համար սահմանում է համայնքի տարածքում մեկ միասնական դրույքաչափ կամ սահմանում է տարբերակված դրույքաչափեր՝ հիմք ընդունելով համայնքի տարածքի՝ յուրաքանչյուր տեղական վճարի<br>համար իր կողմից հաստատված գոտիավորումը»: | Ընդունվել է |